

Զարդարեանի ներշնչման աղբիւրը ընդհանրապէս բնութիւնն է եւ իր խորհուրդներն են, ժողովուրդին հոգին մէջէն դիտուած. իր ոճն ու լեզուն, առանց օտար ազդեցութեանց, գաւառի հոգին գոհարներովը կերտուած է, արուեստագէտի խնամոտ ճաշակին ենթարկուելէ ետք:

«Քերթողի ճշմարիտ սիրտ մը,– կը վերջացնէ Կասթօն Պօնէ Մօրի՝ *Յայգալոյսի* իր յառաջաբանը,– բնութեան գեղեցկութիւններու հանդէպ զգայուն, հաւատարիմ իմ մայրենի երկրին, ազատութեան, արդարութեան եւ երջանկութեան սիրահար, բայց իր հայրենիքին տառապանքներովն ու աքսորին դառնութիւններով սգաւոր»⁶: